

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԼԻԼԻ-ԱՐՄԱՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԻԻ ԱՎԱԶԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻՑ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

/լրամշակված/

Տնօրեն՝

Ա. Մելքոնյան

Երևան 2019

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

2012թ.-ին Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին նոր օրենսգրքի ընդունմամբ հիմք դրվեց մի շարք նոր ընթացակարգերի, որոնց թվին պատկանում է նաև երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմումը:

Շրջակա միջավայրի համար կայուն/անվտանգ և սոցիալապես ընդունելի նախնական գնահատման հայտը պետք է անդրադառնա բնապահպանական բոլոր ասպեկտներին և պետք է կազմվի ընդերքօգտագործման բնագավառին առնչվող ՀՀ բնապահպանական կարգավորման իրավական ակտերով սահմանված պահանջների և նորմերի հաշվառմամբ: Այդպիսի նորմատիվ պահանջներ ներկայացված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի

Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- ՀՀ կառավարության 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն որոշում, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-N որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի N18-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց

իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

ՀՀ Արմավիրի մարզի Արագիի ավազի հանքավայրը «Լիլի-Արման» ՍՊ ընկերությանը շահագործում է 2005 թվականից: ՀՀ Ընդերքի մասին նոր օրենսգրքի ընդունումից հետո ընկերությունը վերաձևակերպել էր արդյունահանման թույլտվությունը և հանքավայրի շահագործումը իրականացվում էր 05.12.2012թ.-ի N ՇԱԹՎ-29/344 ընդերքօգտագործման թույլտվության, թիվ 344 ընդերքօգտագործման պայմանագրի և լեռնահատկացման ակտի շրջանակներում: 31.03.2017թ.-ին «Լիլի-Արման» ՍՊԸ Արագիի ավազի հանքավայրի I, II, III տեղամասերի արդյունահանման գնահատման հաշվետվությունը՝ 50 տարով ժամկետի երկարաձգման վերաբերյալ ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փիվ ԲՓ-33 դրական փորձաքննական եզրակացությունը: Թույլտվության ժամկետը սահմանվել է 25.10.2067թ.-ին:

Հանքավայրի շրջանը գտնվում է Մերձարաքսյան իջվածքում, որը ռեգիոնալ երկրաբանական տեսակետից միջլեռնային տեկտոնական իջվածք է հերցինյան ծալքավորված հիմքի վրա և ծածկված է միջին էոցենի մինչև 1100մ հզորությամբ կավերով, տուֆա-ավազաքարերով, տուֆաալևրոլիտներով, տուֆաարգիլիտներով և օլիգոցենի հասակի մոլասային խայտաբղետ շերտախամբով, որի հզորությունը շուրջ 600-700մ է և ներկայացված է կարմրա-գորշագույն կավերով, գիպսատար կավերով, ալևրոլիտներով, ավազաքարերով և չորրորդականի հասակի ցամաքային և լճային նստվածքներով, որոնք էլ իրենց հերթին ծածկված են Արաքսի ժամանակակից բերվածքներով:

Հանքավայրը ներկայացված է վերին չորրորդական հասակի այլուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ նստվածքներով, հիմնականում մանր և միջին հատիկայնության ավազներով, որոնք պարունակում են չնչին քանակությամբ մանրազլաքարեր և կավափոշային նյութ: Այս նստվածքները ծածկում են ստորին չորրորդականի կավերը, ավազակավերը և կավավազները:

Ըստ երկրաբանական ուսումնասիրությունների տվյալների, հանքավայրի ավազային կուտակը գետահունային բնույթի առաջացում է: Հանքավայրում օգտակար հաստվածքն ունի հարավ-արևելքից հյուսիս-արևմտյան տարածում՝ 300-315° ազիմուտով: Դաշտային մակերեսային դիտարկումների շնորհիվ պարզվել է, որ օգտակար հանածոյի զանգվածը բավարար կերպով մերկացած է, այստեղ բացակայում է հողաբուսական շերտը: Գետի զառիթափ լանջում, մի շարք փլուզումների շնորհիվ օգտակար շերտը մերկանում է ամբողջ հզորությամբ:

հանքավայրի ավազն իր որակական հատկություններով բավարարում է «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-95 ՀՍ ՀՍ ԳՕՍ-ի պահանջները և կարող է օգտագործվել տարբեր տիպի շինարարական աշխատանքներում բնական վիճակում, առանց լվացման:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից 2005թ. մայիսի 24-ին N 67 որոշումով և հաշվեկշռային ստատիկ պաշարները կազմում են 294.6 հազ.մ³ ըստ C₁ կարգի:

Համաձայն գետաողողատային տիպի հանքավայրերի վերականգնվող պաշարների գնահատման մեթոդական ցուցումների, ընդունված է 1 միավոր վերականգնման գործակից, քանի որ Արաքս գետը տվյալ տարածաշրջանում բնութագրվում է տարեկան մեկ՝ գարնանային վարարումով:

▪ ***Նախատեսվող գործունեության բնութագիրը***

«Լիլի-Արման» ՍՊ ընկերությունը Արազի ավազի հանքավայրի I, II և III բացահանքերի տարեկան արտադրողականությունն ընդունված էր համապատասխանաբար 9020մ³/տարի, 8890մ³/տարի և 8890մ³/տարի:

Քանի որ տարեկան վերականգնվող պաշարները կազմում են 294,6հազ.մ³, սույն նախնական գնահատման հայտի շրջանակներում նախատեսվում է ավելացնել բացահանքերի արտադրողականությունը և հասցնել համապատասխանաբար 40հազ.մ³/տարի առաջին տեղամասի բացահանքում և 30հազ.մ³/տարի երկրորդ և երրորդ տեղամասերի բացահանքերում:

Արդյունահանման տեխնոլոգիայում որևիցե փոփոխություն չի նախատեսվում:

Քանի որ հանքավայրի տեղամասերում օգտակար հաստաշերտերն ունեն հորիզոնական տեղադրում և կայուն հզորություն բացահանքերի բացումը կատարվում է կտրող խրամների անցումով, որը կատարվում է բացահանքերի հարավ-արևելյան մասերից՝ ամենացածր նիշից: Բացող խրամների անցման ուղղությունը 1-ին և 3-րդ տեղամասերում հարավ-արևմուտքից – հյուսիս-արևելք ուղղությամբ է, իսկ 2-րդ տեղամասում հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք է:

Կտրող խրամների լայնությունը հատակում ընդունված է 2.0 մ, կողերի թեքման անկյունը 400, միջին խորությունը՝ 1-ին տեղամաս-3.9մ, 2-րդ տեղամաս- 3.8մ, 3-րդ տեղամաս – 3.85մ :

Կտրող խրամների անցումը կատարվում է 1.0մ³ շերտի տարողությամբ դրազլայնով սարքավորված YÍ-5111EXL մակնիշի էքսկավատորով: Օժանդակ աշխատանքների համար էքսկավատորներին կցվում է 2 հատ T-130 մակնիշի բուլդոզեր:

Կտրող խրամների երկարությունը կազմում է 1-ին տեղամասում 135մ, 2-րդ տեղամասում 130մ, 3-րդ տեղամասում 75մ:

Բացահանքերը բնութագրվում են հետևյալ պարամետրերով.

	Բացահանք թիվ 1	Բացահանք թիվ 2	Բացահանք թիվ 3
առավ. երկար.	305մ	410մ	330մ
առավ. լայն.	115մ	120մ	105մ
միջին խորություն	3.9մ	3.8մ	3.7մ
Օտարման մակերեսը	2.6հա	2.75հա	2.26հա

Հանքավայրի տեղամասերը շահագործման ժամանակ ընդունված են ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի համատարած մշակման համակարգ :

Ընդունված մշակման համակարգն ունի տարրերի հետևյալ պարամետրերը.

- աստիճանի բարձրությունը – օգտակար հաստաշերտի հզորությունից հանած 0.1մ (1-ին տեղամաս-3.83մ, 2-րդ տեղամաս – 3.78մ, 3-րդ տեղամաս – 3.7մ) :
- աստիճանի թեքման անկյունը

- աշխատանքնայինը – 400
- ոչ աշխատանքնայինը (մարվածը)– 350
 - ընթացքաշերտի լայնությունը – 8.5մ ,
 - դրագլայնի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը – 16.0մ,
 - աշխատանքային հրապարակի լայնությունը -23.3մ :

Ավազի արդյունահանման աշխատանքները կատարվում են ներքին շերտի ման եղանակով, 1.0մ³ շերտի տարողությամբ դրագլայնով սարքավորված մակնիշի էքսկավատորով: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում բացահանքի մակերևույթին /առաստաղին/ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվում է ջրազրկված հանածոյի կույտի բարձում սպառողների տրանսպորտային միջոցների մեջ:

Ելնելով օգտակար հաստաշերտերի ջրառատության պայմաններից, հանքավայրի շահագործման ժամանակ բացահանքերի տեխնիկական ջրի մատակարարում չի պահանջվում, քանի որ հանքախորշը և ներհանքային ճանապարհները փոշենստեցման կարիք չունեն: Տեխնիկական ջուր պահանջվում է բացահանքերի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրման համար: Ավտոճանապարհների ջրումը կատարվում է KO-002 ջրցան լվացող ավտոմեքենաներով:

Խմելու ջրով աշխատողները ապահովվում են անհատական տափաշներից: Ինչպես երևում է հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից օգտակար հաստաշերտը ջրակալված է:

Ջրի մակարդակը գտնվում է օգտակար հաստաշերտի հատակից 0.5-0.7մ բարձրության վրա: Գետի մոտ գտնվող հունային տիպի հանքավայրերի շահագործման ժամանակ բացահանքի դեպի գետը շրջված ոչ աշխատանքային կողը և ջրի հոսանքի շարժման ուղղությանը հակառակ տեղափոխվող աշխատանքային կողը հանդիսանում են ջրաքաշերտ:

Բացահանքում քանված ջրերը հեռացվում են ջրհեռացնող առունների (խրամների) միջոցով: Խրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 0.5մ, խորությունը -3.8մ, կողերի թեքման անկյունը – 350, թեքությունը - 5%, երկարությունը մոտ 200-290մ:


Ջրհեռացնող առուների հատակից մինչև 0.6մ բարձրության վրա լցվում են գետաքարեր, տիղմը մաքրելու նպատակով:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

Արագիի ավազի հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում՝ Արաքս գյուղի վարչական տարածքում, Արաքս գետի ձախ ափին: Այն տեղակայված է ՀՀ պետական սահմանի հարևանությամբ, բաղկացած է 3 տեղամասերից և զբաղեցնում է մոտ 7.6 հա տարածք /1-ին տեղամաս-2.6հա, 2-րդ տեղամաս-2.7հա, 3-րդ տեղամաս-2.3հա/ (նկարներ 1 և 2): Հանքավայրի նշված տեղամասերը գտնվում են Արաքս գյուղից համապատասխանաբար 2.8կմ դեպի հարավ-արևելք, 1.8կմ դեպի հարավ և 1.4կմ հարավ-արևմուտք: Մասիս-Երևան ավտոմայրուղու հետ հանքավայրը կապված է գրունտային /3.0կմ/ և ասֆալտապատ /12կմ/ ճանապարհներով:

ԱՐԱՁԻՒ ԱՎԱՁԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱՂԻՍՅՈՒՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



Նկար 1.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ARMAVIR MARZ

Մարզկենտրոնը ԱՐՄԱՎԻՐ
3 քաղաք, 95 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների երկարությունը՝ 388կմ

ARMAVIR the center
3 cities 95 settlements
Instate roads 388 km



Նկար 2.

Հանքավայրի տեղամասերը բնութագրվում են հետևյալ կոորդինատներով /ըստ Arm WGS համակարգի/.

I տեղամաս.		II տեղամաս.		III տեղամաս.	
1.	4434779, 8439364	1.	4433809, 8440192	1.	4433626, 8442389
2.	4434808, 8439207	2.	4433958, 8440093	2.	4433755, 8442110
3.	4434802, 8439035	3.	4434100, 8440003	3.	4433718, 8442094
4.	4434756, 8439119	4.	4434130, 8439925	4.	4433626, 8442153
5.	4434695, 8439233	5.	4434006, 8439928	5.	4433573, 8442266
6.	4434705, 8439355	6.	4433904, 8440031		


▪ **Ռելիեֆ, երկրաձևաբանություն**

Երկրաձևաբանական տեսակետից Արագիի ավազի հանքավայրի շրջանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևմտյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասը ներկայացնում է թույլ ալիքաձև ենթահորիզոնական հարթավայրով: Տարածքի երկրաձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները ներկայացվում են ստորև նկար 3-4-ում:


Արարատյան դաշտը միջլեռնային գոգավորություն է, եզրավորված հարավից՝ Փոքր ու Մեծ Արարատ լեռնազազաթներով և դեպի արևմուտք ձգվող Հայկական պար լեռնաշղթայով, հյուսիսից՝ Արագածի, Արա լեռան զանգվածներով և Ծաղկունյաց լեռնաշղթայով, արևելքից՝ Գեղամա, Երանոսի, Շեկասարի և Ուրցի լեռնաշղթաներով, արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին:

Այն տեղադրված է Արաքս գետի ավազանի միջին հոսանքում և ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավարևելք շուրջ 120կմ երկարությամբ և 10-30կմ լայնությամբ, գտնվում է 800-1000մ բացարձակ նիշերի սահմաններում, գրավում է շուրջ 1300կմ² մակերես: Արարատի և Արագածի, Գեղամա, Ուրցի ու Հայկական պար լեռնաշղթաները իրենց նախալեռնային մասերով հանդերձ հանդիսանում են Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի սնման կամ ձևավորման և տարանցման (տրանզիտի) մարզերը:

Արարատյան դաշտն ունի բարդ տեկտոնական կառուցվածք: Տեկտոնական տեսակետից այն իրենից ներկայացնում է Արաքսի տեկտոնական գոտու վերադիր միջլեռնային ճկվածք:



Նկար 3.



Նկար 4.

Ճկվածքի սահմաններում հետծալքավորման հետևանքով առանձնացվում են արևմուտքից արևելք տարածված հետևյալ երկրորդ կարգի հիդրոերկրաբանական կառուցվածքները՝ Արմավիրի իջվածք, Սովետաշենի (Նուբարաշենի) բարձրացում, Արտաշատի իջվածք, Խոր Վիրապի բարձրացում, Արագոյանի (Երասխի) իջվածք, Գայլի-Դոների (Դարպասի) բարձրացում, որին դեպի արևելք հերթափոխում է Նախիջևանի ընդարձակ գոգավորությունը: Դաշտի երկրաբանական կառուցվածքի վերին հարկը կամ այսպես կոչված ծածկույթը, որը ունի շուրջ 500մ հաստություն ներկայացված է չորրորդական հասակի լճագետային նստվածքներով և հրաբխային անդեզիտա-բազալտային լավաներով:

Հանքավայրի տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

Սողանքային երևույթների Արագի հանքավայրի տարածքում չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է երկրաձևաբանական առանձնահատկությունների և տարածքի գրեթե հորիզոնական տեղադրմամբ (ընդհանուր մեղմաթեք անկում մինչև 4° անկյան տակ): Մոտակա սողանքային մարմինները գտնվում են հանքավայրից ավելի քան 17կմ արևելք-հյուսիս-արևելք՝ ՀՀ Արարատի մարզի Այնթափ գյուղի տարածքում:


- **Արագի հանքավայրի շրջանի կլիման** խիստ ցամաքային (նկար 5): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -33°C, բացարձակ առավելագույնը՝ +41°C, միջին առավելագույն ջերմաստիճանը՝ 18°C:

Աղյուսակ 1.

Օդի միջին ջերմաստիճանը

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
-5.1	-2.5	4.5	11.9	17.3	21.5	25.7	25.2	20.2	13.1	5.5	-1.6	11.3

Տարածքը գտնվում է Հարավային Կովկասի առավել չորային (երաշտային) շրջաններից մեկում: Տարվա ընթացքում տեղումների գումարային միջինը կազմում է 271 մմ, օրական առավելագույն քանակը 38 մմ:



Նկար 5.

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
77	69	64	56	56	49	44	46	50	62	74	78

Արարատյան դաշտավայրի և շրջակա լեռնաշղթաների միջև ջերմային կոնտրաստները առաջացնում են լեռնա-դաշտավայրային ուժեղ քամիներ, հատկապես ամռանը, իսկ ձմռանը հարթավայրի սահմաններում դիտվում է թույլ քամիներ առանց հողմի: Առանձին դեպքերում քամու արագությունը հասնում է 15-20մ/վ:

Աղյուսակ 3.

Քամու միջին արագությունը ըստ ամիսների, մ/վ

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
0,7	1,2	1,4	1,6	1,5	1,4	1,7	1,4	1,2	0,9	0,7	0,5

Ձմեռը ցուրտ է, չոր, քիչ ձյունոտ: Ձնեծածկով օրերի միջին թիվը 45, ձմեռվա ընթացքում ծածկույթի միջին բարձրությունը 10 սմ:

Գարունը տևական չէ, տաք է, հիմնականում խոնավ և սկզբում առանձնանում է փոփոխականությամբ: Գարնանային սառցակալումները միջին տվյալներով կրճատվում են ապրիլի սկզբի 2-րդ տասնօրյակին:

Ամառը տևական է, շոգ, չոր, պարզ եղանակի գերակշռությամբ: Ամառային ամիսների միջին ջերմաստիճանը 24.2⁰ C, առավելագույնը՝ 41⁰C:

Աշունը չոր է, տևական և փափուկ, արևային, տաք և չոր եղանակի գերակշռությամբ:

▪ ***Մթնոլորտային օդ***

Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկման կայան Արագիի հանքավայրի տարածքի շրջանում չկա:

Որոշակի պատկերացում հանքավայրի տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից: Հիմք ընդունելով նշված ձեռնարկը, հանքավայրի տարածքի մթնոլորտային օդում փոշու ֆոնային կոնցենտրացիան ընդունվում է որպես 0,2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդինը՝ 0,02 մգ/մ³, ազոտի երկօքսիդինը՝ 0,008 մգ/մ³ և ածխածնի օքսիդինը՝ 0,4 մգ/մ³ :

▪ ***Ջրային ռեսուրսներ***

Հանքավայրն իր ծագումով կապված է Արաքս գետի հիդրոլոգիական ռեժիմի հետ: Արաքս գետի վրա եղած 4 հիդրոլոգիական դիտարկման կետերի 5-7 տարիների դիտարկման տվյալները ցույց են տվել, որ Արաքս գետը հանքավայրի շրջանում բնութագրվում է տարվա մեջ մեկ՝ գարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝ տևելով շուրջ 90-103 օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 925 մ³/վրկ: Ջրի առավելագույն նվազումը տեղի է

ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև 24 մ³/վրկ: Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է 167 մ³/վրկ:

Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000 գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100 կգ/վրկ:

Հանքավայրի տարածքը գտնվում է Արաքս գետի ձախափնյա մասում: Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ²:


Ըստ Շրջակա միջավայրի նախարարության մոտակա դիտակայանում (Ռանչպար գյուղից 0,5կմ ներքև) իրականացված մշտադիտարկումների՝ ջորը «վատ» որակի է, 3-րդ դասի, ինչը պայմանավորված է ԹՔՊ, նիտրիտ իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, ընդհանուր ֆոսֆորի պարունակություններով:

Հունային ջրերի մակարդակը գտնվում է օգտակար կուտակի հիմքից 0,5-0,7մ բարձրության վրա: Արդյունահանումը մասամբ կատարվում է ջրային պայմաններում:

▪ **Հողեր**

Արագիի ավազի հանքավայրի տարածքը ներկայացված է ժամանակակից գետաբերուկային ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով: Քանի որ հանքավայրը դասվում է տարեկան ցիկլով վերականգնվող պաշարներով հանքավայրերի շարքին և ամեն տարի թղթվում է Արաքս գետի ջրերով, ապա հողաբուսական շերտի գոյացում հանքավայրի տարածքում տեղի չի ունենում:

Հանքավայրի շրջանի հողերը ներկայացված են մարգագետնային գորշ և աղուտ-ալկալի տիպերով: Սահմանափակ տարածում ունեն նաև ավազուտները: Հողերի բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 6-ում:



Նկար 6.


Մարգագետնային գորշ ոռոգելի հողերն տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Ըստ խոնավության պայմանների և արտահայտվածության մարգագետնային գորշ ոռոգելի հողերը ստորաբաժանվում են երեք ենթատիպի՝ խոնավ մարգագետնային գորշ, մարգագետնային գորշ և մնացորդային մարգագետնային գորշ: Հումուսի քանակն առաջին երկու ենթատիպերում կազմում է համապատասխանաբար 3-3.5% և 1.4-1.8%:

Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային:

Աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 20-25 մգ/էկվ):

▪ **Քուսական և կենդանական աշխարհ**

Հանքավայրի շրջանում տարածված են ասղասեր անապատային և ջրաճահճային բուսատեսակները (նկար 7):



Նկար 7.

Հալոֆիլ տեսակներից հայտնի են հավամրգանման, ծառանման և նատրոային օջանները, մանրատերև սվեդան, մերձկասպյան աղահասկիկը, բիներցիան և այլն: Որոշ տարածքներ ծածկված են ավազաքար անապատային բուսական խմբավորումներով՝ սովորական տատաշը, նրբատերև հազարատերևուկը, եզնապտուկը:

Գետի ափամերձ հատվածներում տարածված են հիդրոֆիտ բույսեր: Այստեղ առանձին կղզյակների տեսքով աճում են բոշխերի և եղեգի մացառուտներ, մազիկավոր փետրախոտ:

Բուն հանքավայրի տարածքում համատարած բուսածածկ չի ձևավորվում, ինչը պայմանավորված է Արագիի հանքավայրի ծագումնաբանությամբ: Հանքավայրը պատկանում է վերականգնվող պաշարներով հանքավայրի դասին: Յուրաքանչյուր տարի Արաքս գետի վարարման շրջանում տարածքը վրածածկվում է գետի ջրերով և տեղի է ունենում նստվածքագայոցում՝ ավազային զանգվածի նստեցում: Կուտակված պաշարը յուրաքանչյուր տարի արդյունահանվում է, այսինքն ԱԿԽ կուտակը մշտապես գտնվում է դինամիկ վիճակում: Արդյունահանման տարածքներին հարակից հատվածներում դիտարկվել են մազիկավոր փետրախոտ, հարավային եղեգ և կեռոն:

Հայցվող տեղամասի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային, հանրապետության տարածքում լայն տարածում ունեցող կենդանական ձևերով: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դողոշների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ: Լայնորեն տարածված կենդանատեսակներից այստեղ հանդիպում են. կաթնասուններից՝ նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ: Թռչուններից Արաքս ափերին՝ հանքավայրի շրջանում դիտվել են կոցար, սև կեռնեխ, տափաստանային արտույտ: Գետի ջրերում՝ հանքավայրի հատվածում, հայտնի են կարաս և բեղաձուկ:

Բուն հանքավայրում կենդանական աշխարհի ներկայացուցիչներ բներ, բնադրավայրեր և այլն չկան, ինչը պայմանավորված է հանքավայրի ձևավորման առանձնահատկություններով:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Արագի ավազի հանքավայրը ներառված է բնության հատուկ պահպանվող տարածքերի շարքում: Արմավիրի մարզում հայտնի է միայն «Որդան կարմիր» պետական արգելավայրը, որը գտնվում է հանքավայրից մոտ 6-14կմ հեռավորության վրա: Արգելավայրն զբաղեցնում է 219.85 հեկտար տարածք, բաղկացած է երկու առանձին տեղամասերից՝ Արագափի գյուղական համայնքի հյուսիս-արևմտյան մասում (198.33 հեկտար) և Ջրառատի գյուղական համայնքի հյուսիսային մասում (21.52 հեկտար)՝ Արարատյան հարթավայրում, ծովի մակերևույթից 835-850 մետր բարձրության վրա:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

ա) արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

բ) Արարատյան հարթավայրի աղուտային (հալոֆիտ) ցուցանմուշային էկոհամակարգերի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

գ) արգելավայրի վայրի բուսական և կենդանական աշխարհի էկոլոգիական միջավայրի պահպանությունը.

դ) հազվագյուտ ու անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

ե) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջությունն իրականացնելու համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը:

Բնության հուշարձաններից Արմավիրի մարզում են գտնվում.

Անվանումը	Գտնվելու վայրը	Հեռավորությունը հանքավայրից
«Մեծամոր» լիճ (ջրագրական հուշարձան) և Մեծամոր լճի ջրաճահճային բուսականություն (կենսաբանական հուշարձան)	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ	Մոտ 15կմ
«Ավագասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ	Մոտ 12կմ

Հանքավայրի տարածքում արդյունահանման աշխատանքները կատարվում են 2005 թվականից: ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ այստեղ չեն դիտարկվել:

Հանքավայրի շրջանում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են՝

- Սիբեի սիբեիանման, նվարդակ կնարաձև – աճում են Այդր լճի խոնավ տարածքներում, հանքավայրից մոտ 15կմ հեռավորության վրա,
- Բիներցիա շուրջաթև և օջան սողակիր - արեալները գտնվում են Երասխահուն գյուղի մոտ, հանքավայրից մոտ 8կմ հեռավորության վրա,
- Մարսազան կոնաձև, կալախոտ կասպիական, ադահասկիկ Բելանժեյի, Բորակաթուփ Շոբերի - հայտնի են Երասխահուն, Մարգարա, Արագափ գյուղերի մոտ, հանքավայրից 8-13կմ հեռավորությունների վրա,
- Կարմրան ութառեջ – հայտնի է Մարգարա գյուղի շրջակայքից, հանքավայրից մոտ 10կմ հեռավորության վրա:

Հանքավայրի շրջանում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են՝

- Վան Բրինկի նետիկ և Լինդենի նետիկ, մարգագետնային ծիծառակոցար – հայտնի են Տարոնիկ գյուղի շրջակայքից, հանքավայրից մոտ 13կմ հեռավորության վրա,
- Թամբակիր ճպուռ – հայտնի է Արաքս, Արագափ, Մարգարա գյուղերի շրջակայքից, կիսաանապատային գոտու մանր տաք ջրամբարներից և լճերից, հանքավայրից 2-ից 12կմ հեռավորությունների վրա,
- Ուբադջի ճպուռ – հայտնի է Մարգարա գյուղի շրջակայքից, հանքավայրից ավելի քան 10կմ հեռավորության վրա,
- Որդան կարմիր – պահպանվում է «Որդան կարմիր» պետական արգելավայրում, որը գտնվում է հանքավայրից մոտ 6-14կմ հեռավորության վրա,
- Ռուբենյանի բնդեռիկ – հայտնի է Արաքս գյուղի շրջակայքի աղուտ-ալկալի հողերից, հանքավայրից մոտ 1կմ հեռավորության վրա,

- Նմանաձև ծակդեփոշեկեր – ապրելավայրը Արաքս գետի տուգայան խիտ բուսականություն՝ Արաքս և Մարգարա գյուղերի շրջակայք, հանքավայրից մոտ 2կմ և 10կմ հեռավորության վրա,
- Փոքր ձկնկուլ, տարգալակտուց – ապրելավայրը Սևջուր գետի ճահճային տարածքներ, Արաքս գետի գերխոնավ տարածքներ, հանքավայրից մոտ 2կմ հեռավորության վրա,
- Խայտաբադ, լայնակտուց բադ, սպիտակաճակատ սագ – ապրելավայրը Արաքս գետի գերխոնավ տարածքներ, սակայն հանքավայրի տարածքում չեն դիտարկվել:

Ինչպես արդեն նշվել է, հանքավայրը պատկանում է վերականգնվող պաշարներով հանքավայրերի դասին: Հանքավայրի տարածքում յուրաքանչյուր տարի կատարվում է ավազի նստվածքագոյացում, դրա հաջորդական արդյունահանմամբ: Հանքավայրը շահագործվում է 2005 թվականից: Այստեղ չի ձևավորվում հաստատուն հողաբուսական շերտ և, հետևաբար, բուսականություն: Հանքավայրի տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսերի աճելավայրեր կամ կենդանիների բնադրավայրեր չեն արձանագրվել:

Արդյունահանման աշխատանքների ընթացքում շահագործվելու են արդեն գոյություն ունեցող, գործող ենթակառուցվածքները, հետևաբար լրացուցիչ ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է որի հեռավորությունը Երևանից 48կմ է: Մարզն ունի 3 քաղաքային (Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր) և 94 գյուղական համայնքներ: Համայնքներից 7-ը սահմանամերձ են: Մարզը արևմուտքից և հարավից սահմանակից է Թուրքիային, հյուսիսում սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ Երևանին և ՀՀ Արարատի մարզին: ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 130.5 կմ հատված:

Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 4.2 %-ը (տարածքը՝ 1242 քառ.կմ), 1քառ. կմ-ի վրա ապրում է 251 մարդ: Մարզի բնակչությունը 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմում է 286.2 հազ. մարդ, որից 102.1 հազ. բնակվում են քաղաքներում: Արմավիրի մարզը բնակչության բացարձակ թվով գրավում է միջին տեղ, բայց առաջինն է բնակչության խտության ցուցանիշով: ՀՀ Արմավիրի մարզի տարածաշրջանի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 595,3 կմ, որից՝ միջպետական նշանակության ճանապարհները - 109.0 կմ, Հանրապետական նշանակության ճանապարհները - 96.1 կմ, մարզային նշանակության ճանապարհները - 279.9 կմ, համայնքային նշանակության ճանապարհները - 110.3 կմ:

ՀՀ Արմավիրի մարզին բաժին է ընկնում հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալի մոտ 4%-ը և գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալի շուրջ 17.6%-ը:

Եկամուտների հիմնական մասը առաջանում է գյուղատնտեսական գործունեությունից: Չնայած մարզի գյուղացիական տնտեսությունները հիմնականում ունեն սեփական հող, այնուամենայնիվ զիջում են քաղաքային տնտեսություններին և եկամտային, և մարդկային աղքատության առումով, և հիմնական կապիտալի առկայությունը չի նպաստում աղքատության կրճատմանը: Մարզում 97066.9 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերից 61592.3 հեկտարը ոռոգելի են: Շուրջ 19000 հա գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր չեն մշակվում հիմնականում ոռոգման ջրի պակասի, ներտնտեսային ցանցերի բացակայության,

կրկնակի աղակալված լինելու, ինչպես նաև առանձին գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության և արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով:

Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվել է 50634 գյուղացիական տնտեսությունների միջոցով:

ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում վերջին տարիներին որոշ ծրագրեր են իրականացվել ճանապարհաշինության, սոցիալական ենթակառուցվածքների, գազաֆիկացման և բնակարանաշինության բնագավառներում: Մարզային զարգացման ծրագրի շրջանակում ևս մարզում վերանորոգվել և բարեկարգվել են համայնքային ճանապարհներ, դպրոցներ, պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, խմելու ջրի և ոռոգման համակարգեր:

Երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք որպես արդյունք խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն մարդկային զարգացումն ինչպես տարածքներում, այնպես էլ ամբողջ երկրում: Հայաստանի տարածքների բնակլիմայական առանձնահատկությունները, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափություններ: Շուկայական տնտեսությանն անցման փուլում, սկսած 2000-ականներից, այդ անհամաչափություններն էլ ավելի են խորացել և շարունակում են անընդմեջ խորանալ՝ հասնելով մտահոգիչ մակարդակի: Տնտեսական զարգացումը կենտրոնացել է Երևանում և որոշակի, խիստ սահմանափակ թվով մարզերում (հիմնականում՝ Սյունիք, Կոտայք), որպես արդյունք՝ առաջացնելով երկրի տարածքներում բնակչության կենսամակարդակի/աղքատության ու մարդկային զարգացման բնութագրիչների խիստ արտահայտված տարբերություններ

2013-2014 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում են թվով 3287 ուսուցիչներ, աշակերտ-ուսուցիչ թվերի հարաբերակցությունը 10.9 է, աշակերտների միջին խտությունը դասարաններում՝ 20.9:

Արմավիրի մարզում ներկայումս գործում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 6 ուսումնական հաստատություններ՝ Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ, Արմավիրի արվեստի պետական քոլեջ, Էջմիածնի պետական քոլեջ, Արմավիրի բժշկական քոլեջ և Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան:

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարության և փորձնական ծրագրի, 2014 թվականից ներդրվել է կայուն դպրոցական սննդի համակարգը: Այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից կտրվեն համապատասխան հատկացումներ՝ ըստ տարիների: 2014 թվականից դպրոցական սննդի ծրագրում կներառվեն Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի, իսկ 2015 թվականից նաև Արարատի մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված բոլոր սովորողները: Ընդ որում, ծրագրում ընդգրկվող երեխաների թիվը ենթակա է ճշտման յուրաքանչյուր տարի՝ նոր ուսումնական տարվա փաստացի կոմպլեկտավորման արդյունքում: Եռամյա ծրագրի արդյունքների հիման վրա 2016 թվականից հետո այն աստիճանաբար կտարածվի մյուս մարզերում նույնպես: Միաժամանակ 2014-2016թթ. կշարունակվի ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ) դպրոցական սննդի ծրագիրը հանրապետության 9 մարզերում, ընդգրկելով տարրական դասարանների շուրջ 67000 սովորողների:

Մարզում առկա է համայնքային ենթակայության 85 մշակույթի տուն, որից Արմավիրի տարածաշրջանում՝ 38, Էջմիածնի տարածաշրջանում՝ 40, Բաղրամյանի տարածաշրջանում՝ 7: Մշակույթի տներից լիարժեք գործում են 16-ը: Մարզի մշակույթի տները հիմնականում անցյալ դարի 60-70-ական թվականների կառույցներ են, այդ իսկ պատճառով կարիք ունեն վերանորոգման, որը համայնքը միայն իր սեփական միջոցներով չի կարող իրականացնել: Արմավիրի մարզում գործում են 102 գրադարաններ, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ, 12-ը՝ քաղաքային, 89-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1161830 կտոր

գիրք՝ ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության, «Գիրք» հիմնադրամի, «Արևիկ» հրատարակչության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կատարված նվիրաբերությունների շնորհիվ:

Գործում է 9 թանգարան. Սարդարապատի հուշահամալիր-Հայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պատմության պետական թանգարան, Մուսալեռի հուշահամալիր-թանգարան, Զվարթնոց պատմաճարտարապետական արգելոց-թանգարան, Էջմիածնի գավառագիտական թանգարան, Էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի անվան թանգարան, Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան, Մեծամորի պատմահնագիտական թանգարան, Միեր Աբեղյանի անվան թանգարան, Բաղրամյանի «Արաբոյի և ֆիդայիների հայրենասիրական թանգարան», որոնց հավաքածուները պարբերաբար համալրվում են նոր թանգարանային նմուշներով՝ հնագիտական նոր նյութերի և անհատների կողմից կատարած նվիրաբերությունների շնորհիվ:

Արմավիրի մարզի պատմամշակութային արժեքներն են՝ սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այդր լիճը, «Մուսալեռ» և «Սարդարապատ» հուշահամալիրները: Էջմիածին քաղաքի եկեղեցիները և Զվարթնոց հնագիտական վայրը ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում:

Մարզում գործում է 9 մարզադպրոց, ինչպես նաև նշված մարզադպրոցների մասնաճյուղեր մարզի տարբեր համայնքներում: Համայնքային ենթակայության մարզադպրոցներում գործում են 92 խմբեր՝ 13 մարզաձևերից: Արտադպրոցական և արտադասարանական մարզական խմբերի պարապմունքներում ընդգրկված են դպրոցահասակ երեխաների 30-40%-ը: Մարզի հանրակրթական դպրոցներում և համայնքներում գործում են 189 խմբեր՝ 20 մարզաձևերից: Արմավիրի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցներ չկան: գործում են 61 առողջապահական հիմնարկներ, որոնցից 7-ը՝ մարզպետարանի ենթակայության, այդ թվում՝ բժշկական կենտրոններ - 2 (Արմավիր, Մեծամոր), հիվանդանոց - 1 (Վաղարշապատ), ծննդատուն - 1 (Վաղարշապատ), պոլիկլինիկա - 2 (Վաղարշապատ, Բաղրամյան), արյան փոխներարկման կայան - 1 (Արմավիր): Համայնքային

ենթակայության թվով 52 «Գյուղական բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ներ ընդգրկում են 43 բուժական կաբարձական կետեր:

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Հայցվող տարածքը գտնվում է Արաքս համայնքի հողերում: Համայնքի վարչական տարածքը կազմում է 12.9կմ²:

Մշտական բնակչության քանակը 1841 մարդ /2018թ.-ի տվյալներ/:

Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 67500մ², առկա են 310 առանձնատուն:

Գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերը կազմում են 873.84հա, բնակավայրերի հողերի՝ 130հա:

Խոշոր եղջրավոր անասունների գլխաքանակը 136, մանր եղջրավորներինը՝ 70, խոզերը 166:

Գյուղատնտեսական տեխնիկական 12 հատ է, որից 9 տրակտոր:

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը բանջարաբուստանային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են:

Արաքս համայնքի բնակիչները իրազեկվել են Արագիի հանքավայրի վերաբերյալ դեռևս 2004-2005թթ.-ին՝ հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների փուլից, երբ մեր ընկերությունը ստացել է համայնքի նախնական համաձայնությունը աշխատանքների իրականացման համար: 2017 թվականին համայնքը հավանություն է տվել նաև 50 տարով հանքավայրի շահագործման ժամկետի երկրարաձգմանը: Արդյունահանման ծավալների ավելացման ծրագիրը նույնպես ներկայացվել է համայնքի քննարկմանը: Հանրային լսումները իրականացվելու են ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Հանքավայրի տարածքի հողերը ներկայացված են ջրային և հատուկ նշանակության հողերով: Ընկերությունն ունի բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և անցագրերը՝ սահմանամերձ հատվածում աշխատանքներ իրականացնելու համար:

▪ ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1589-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Արաքս համայնքի տարածքում հաշվառված են երկու հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանը և Ս. Շահումյանի հուշարձանը, որոնք գտնվում են բնակավայրի կենտրոնում, հանքավայրից ավելի քան 1կմ հեռավորության վրա:

Հուշարձանները և դրանց պահպանության գոտիները ներառված չեն բացահանքերի սահմաններում:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արագիի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքերի ծավալների ավելացման ընթացքում մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա հնարավոր է հետևյալ բացասական ազդեցությունների դրսևորումը:

Մթնոլորտային օդ.

Հանքավայրի տարածքում վնասակար հազերի և փոշու արտանետումները կապված են լինելու ավտոտրանսպորտի և սարքավորումների աշխատանքի հետ: Օգտակար հանածոյի արդյունահանման և տեղափոխման ժամանակ փոշու արտանետումներ չեն լինելու, քանի որ օգտակար հանածոն գտնվում է ջրահագեցած վիճակում: Փոշեգոյացում կատարվելու է հանքավայրից դուրս՝ ավտոճանապարհներին, օգտակար հանածոյի տեղափոխման ժամանակ:

Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասերի տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան.

Հանքավայրը հանդիսանում է դինամիկ պաշարներով հանքավայր և կապված է Արաքս գետի գետահովտադարավանդային առաջացումների հետ: Յուրաքանչյուր տարի հանքավայրի տարածքը վրածածկվում է գետի ջրերով և ձևավորվում են գետի դինամիկ պաշարները: Գետի ջրերի վրա բացասական ազդեցություններ կարող են դրսևորվել վարարման շրջանում աշխատանքներ իրականացնելու դեպքում, ինչը, համաձայն հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման գործող մեթոդաբանության, բացառվում է:

Բացասական ազդեցության կարող է ձևավորվել բացահանքերի մշակված տարածությունում կուտակված ջրերը ջրհեռացման ժամանակ, երբ տեղի ունենա կուտակված տիղմի արտահոսք Արաքս գետը:

Հողային ծածկույթ.

Բացահանքի տարածքում ռեկուլտիվացիոն աշխատանքներ չեն կատարվելու, քանի որ հանքավայրի վերականգնվող պաշարներով է: Հանքավայրի շահագործման

ավարտից հետո բարեկարգման ենթակա է միայն արտադրական հրապարակը: Մոտեցնող ճանապարհը օգտագործվում է նաև սահմանապահների կողմից, այդ պատճառով չի ռեկուլտիվացվելու: Հողաբուսական շերտ հանքավայրի տարածքում չկա, մակաբացման աշխատանքներ և հողերի կույտավորում, պահպանում չի նախատեսվում: Արտադրական հրապարակի բարեկարգման համար անհրաժեշտ գումարների հաշվարկը կներկայացվի աշխատանքային նախագծում:

Բուսական և կենդանական աշխարհ.

Ավազի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է, քանի որ տեղամասերը շահագործվում է ավելի քան 14 տարի, նոր տարածքների խախտում և, հետևաբար, բնական համակարգերի վրա նոր տեխնածին ճնշումների դրսևորում չի նախատեսվում: Ավազի արդյունահանման տեխնոլոգիական գործընթացը բացառում է ագրեսիվ նյութերի կիրառումը, չեն նախատեսվում նաև հորատապայթեցման աշխատանքներ: Կենդանական աշխարհի վրա առավել ազդեցիկ գործոնը կապված է լինելու աղմուկի հետ: Բուսականության վրա բացասական ազդեցություն գրեթե չի դրսևորվելու, քանի որ հանքավայրում չկա բուսածածկ:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Մոտեցնող ճանապարհների անցում	Բացահանքի անցում	Արդյունահանման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	ցածր երկարատև	ցածր երկարատև	ցածր երկարատև
Ջրեր	աննշան	աննշան	աննշան
Հողեր	աննշան	աննշան	աննշան
Կենսաբազմազանություն	աննշան	աննշան	աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար :
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն :
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով ճանապարհների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով :
- Արտադրական հրապարակի բարեկարգում :
- Արաքս գետի ջրերի աղտոտման բացառում:
- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում:
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ (մինչև 35լ տարողությամբ), ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխում մոտակա աղբավայրը:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- «ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

- Արդյունահանման աշխատանքների բացառում գետի վարարման շրջանում, ինչը թույլ կտա նաև բացառել ազդեցությունը գետի կենդանական աշխարհի վրա,
- Յուրաքանչյուր ամիս տոպո-մարկշեյդերական աշխատանքների իրականացում՝ ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի N18-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- Բացահանքերի մշակված տարածությունում կուտակված ջրերի մաքրում, գտում ջրհեռացնող խրամներում,
- Ջրհեռացնող խրամներում կուտակված տիղմի օգտագործում շրջակա տարածքի կանաչապատման համար:

Հանքավայրի տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

- 1) երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանքավայրը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,
- 2) ջրհեղեղ՝ հաշվի առնելով, որ հանքավայրը կապված է Արաքս գետի հիդրոլոգիական գործունեության հետ,
- 3) հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Բացահանքի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.


1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մլգ/մ^3 , ազոտի երկօքսիդի համար՝ 0.085մլգ/մ^3 , մրի համար՝ $0,15\text{մլգ/մ}^3$:
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
3. Արաքս գետի ջրերի պղտորության և աղտոտվածության մոնիթորինգ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Մշտադիտարկումն իրականացվելու է յուրաքանչյուր բացահանքից ջրհեռացումն իրականացնող խրամի ելքային հատվածում,
4. գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ՝ յուրաքանչյուր ամիս պարբերականությամբ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 8-ում:

Արագիի հանքավայրում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

ԱՐԱՋԻ ԱՎԱՋԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



Նկար 8.

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Հանքի աշխատողներն ապահովվում են համազգեստով և Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Հանքի սարքավորումների շահագործում են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցները իրազեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ 	<ul style="list-style-type: none"> - Չննման ընթացքում հանքի աշխատողները կրում էին համազգեստ և համապատասխան ԱՊՄ - Չննման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել
2. Արդյունահանման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> - Փոշեգոյացման կանխում օգտակար հանածոյի տեղափոխման ժամանակ - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Հանքի տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում 	<ul style="list-style-type: none"> - Ճանապարհների ջրցանում, տեղափոխման ժամանակ բարձր ավազի զանգվածի ծածկում - Չննման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել - Չննման ընթացքում հանքի տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ
	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Բացառելով ավելորդ արտանետումները - Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում 	<ul style="list-style-type: none"> - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Չննման ընթացքում հանքի սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում - Չննման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
3. Հանքի տեխնիկայի շահագործում	<ul style="list-style-type: none"> - Շրջակա միջավայրի աղտոտում արտանետումներով և արտահոսքերով - Հարակից 	<ul style="list-style-type: none"> - Հանքի սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում - Ոչ մի հավելյալ արտանետում - Վառելիքի և քսայուղերի ոչ մի 	<ul style="list-style-type: none"> - Չննման ընթացքում մեքենաները և տեխնիկան եղել են պատշաճ տեխնիկական վիճակում - Հաստատված աշխատանքային

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ
	<p>համայնքների բնակչությանը պատճառած անհարմարություն</p>	<p>արտահոսք - Աշխատանքային ժամերի պահպանում</p>	<p>Ժամերից հետո ոչ մի շահագործվող ծանր տեխնիկա կամ մեքենա չի հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել</p>
<p>4. Արդյունահանման սարքավորումների սպասարկում</p>	<p>- Մարքավորումների շահագործման հետևանքով մակերևութային և ստորգետնյա ջրերի և հողի աղտոտում նավթամթերքներով - Վնաս հրդեհի դեպքում</p>	<p>- Մեքենաների և տեխնիկայի լվացում բնական հոսքերից առավելագույն հեռավորության վրա - Հանքի տեխնիկայի յուղում և լցավորում նախապես որոշված լցավորման կայաններում/ սպասարկման կետերում</p>	<p>- Մեքենաների լվացման արդյունքում ոչ մի ուղղակի արտահոսք դեպի ջրային ավազաններ - Հանքի տարածքի սահմաններում կամ մոտակայքում հողի վրա վառելիքի կամ քսայուղերի հետքեր չեն հայտնաբերվել - Հրդեհի մարման հիմնական միջոցների առկայություն հանքի տարածքում</p>
<p>5. Հեղուկ թափոնների գոյացում</p>	<p>- Մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտում - Աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում</p>	<p>Հանքի տարածքում զուգարանի տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան</p>	<p>Հանքի տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն</p>
<p>6. Բանեցված յուղերի</p>	<p>- Արտադրական</p>	<p>- Յուղերի անվտանգ փոխադրում</p>	<p>- Փոխարինված յուղերը պատշաճ</p>

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ
<p>հեռացումից գոյացող թափոններ</p>	<p>հրապարակի տարածքի աղտոտում</p> <ul style="list-style-type: none"> - Արդյունահանման աշխատանքների կատարման վայրի և շրջապատի գեղագիտական տեսքի վատթարացում 	<p>պահեստային տարածք</p> <ul style="list-style-type: none"> - Յուղերի անվտանգ պահեստավորում - Յուղերի հեռացում լիցենզավորված կազմակերպության կողմից 	<p>կերպով պահեստավորված են</p> <ul style="list-style-type: none"> - Փոխարինված յուղերը հեռացված են լիցենզավորված կազմակերպության կողմից
<p>7. Երթևեկության և հետիոտների անվտանգություն</p>	<p>Ուղղակի և անուղղակի վտանգներ</p> <p>երթևեկությանը և հետիոտներին հանքի շահագործման աշխատանքների ժամանակ</p>	<ul style="list-style-type: none"> - Նախագուշացնող նշաններ, արգելքներ և երթևեկության ուղղության փոփոխում - Երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում, հատկապես հանքի մուտքի մոտ և մոտակա ինտենսիվ երթևեկության կառավարման համար: Անվտանգ անցումների ապահովում հետիոտների համար այն վայրերում, որտեղ անցնում են հանքը սպասարկող մեքենաները - Աշխատանքային ժամերի հարմարեցում տեղի երթևեկության պայմաններին, օրինակ՝ խուսափում խոշոր 	<ul style="list-style-type: none"> - Հանքի ապահով տարածք - Աշխատանքների հստակ տեսանելի տարածք, հանրության զգուշացում հնարավոր վտանգների վերաբերյալ - Կարգավորված երթևեկություն

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ
		<p>փոխադրումներից ինտենսիվ երթևեկության ժամերին,</p> <p>- Տարածքում երթևեկության ակտիվ կառավարում պատրաստված և տեսանելի արտահագուստով անձնակազմի կողմից, եթե դա պահանջվում է մարդկանց անվտանգ ու հարմարավետ տեղաշարժի համար</p>	

Մոնիթորինգի պլան

Գործողություն	Ինչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ շարունակականությունը)	Ինչու՞ է (հսկվում)
1. Փոշի	Օդի վիճակը	Ճանապարհներ	Տեսողական զննում Գործիքային չափումներ	Պարբերական	Նվազեցնել անհարմարությունները անձնակազմի, ազդակիր համայնք, բուսական և կենդանական աշխարհի համար
2. Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերի պահպանում - Ավտոմեքենաների և տեխնիկայի տեխնիկական վիճակը - Աղմուկի մակարդակը (բողոքների դեպքում) 	Հանքի տարածք	- Տեսողական զննում	<ul style="list-style-type: none"> - Պարբերական - Բողոքից հետո երկու շաբաթվա ընթացքում 	Նվազեցնել անհարմարությունները անձնակազմի, ազդակիր համայնք, բուսական և

Գործողություն	Ի±նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
					կենդանական աշխարհի համար
3. Ջրեր	Աղտոտվածություն, պղտորություն	Արաքս գետ	Նմուշառում, նմուշների վերլուծությու ն	Պարբերաբար	Բացառել գետի աղտոտումը
	Հունի և ավերի կայունություն	Հանքի տարածք	Տոպոմարկ- շեյդերական աշխատանք- ներ	Պարբերաբար	Ապահովել ՀՀ կառավարությա ն 01.01.2008թ.-ի N18-Ն որոշման պահանջները
4. Ավտոմեքենաներ ի և տեխնիկայի սպասարկում	<ul style="list-style-type: none"> - Ավտոմեքենաների և տեխնիկայի լվացում բնական ջրային հոսքերից առավելագույն հեռավորության վրա - Ավտոմեքենաների լցավորում և յուղում նախապես որոշված լցավորման 	Հանքի տարածք	Աշխատանքն երի գնում	Ընտրանքային գնումներ աշխատանքայ ին ժամերի ընթացքում	- Խուսափել սարքավորում -ների շահագործ- ման ընթացքում նավթամթերք ներով ջրի և հողի

Գործողություն	Ի±նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
	կայաններում /սպասարկման կետերում				աղտոտումից - Ժամանակին տեղայնացնել և նվազեցնել հնարավոր վնասը
5. Հեղուկ թափոնների գոյացում	- Հանքի տարածքում զուգարանների կազմակերպում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	Հանքի տարածք	Աշխատանքն երի զննում	Աշխատանքն երի ողջ ժամանակա- հատված	- Մակերևութայ ինն ստորգետնյա ջրերի աղտոտման բացառում
6. Յուղերի փոխարինումից թափոնների առաջացում	- Բանեցված յուղերի փոխադրում պահեստ - Բանեցված յուղերի պահեստավորման պայմանները յուղերի պահեստում	- Փոխադրմա ն երթուղին - Բանեցրած յուղերի պահեստ	Տեսողական զննում	-Յուղերի փոխադրման ընթացքում -Պարբերաբար յուղերի պահեստավոր ման ընթացքում	Արտադրական հրապարակի տարածքի աղտոտումից խուսափում

Գործողություն	Ի±նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
7. Աշխատողների առողջություն և անվտանգություն	<ul style="list-style-type: none"> - Հանքի աշխատողների կողմից համազգեստի և ԱՊՄ կրումը - Հանքի սարքավորումների շահագործման և ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում 	Հանքի տարածք	Աշխատանքների զննում	Աշխատանքների ողջ ընթացքում	Կրճատել հանքի բանվորների կողմից վնասվածքների ստացման և պատահարների հավանականությունը
8. Վտանգավոր թափոնների (յուղոտ լաթեր, յուղով աղտոտված ավազ) կառավարում	<ul style="list-style-type: none"> - Վտանգավոր թափոնների առանձնացում հանքում առաջացած այլ տեսակի թափոններից - Պատշաճ կերպով փակվող և պահպանվող պահեստային տարածքի առկայություն վտանգավոր նյութերի համար 	Հանքի տարածք	<ul style="list-style-type: none"> - հանքի զննում - Լիցենզավորված կազմակերպության հետ թափոնների հեռացման վերաբերյալ պայմանագր 	Հանքի շահագործման ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Պատշաճ սանիտարական պայմանների պահպանում հանքի տարածքում - Արտադրական հրապարակի տարածքի

Գործողություն	Ի±նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
	<ul style="list-style-type: none"> - Համաձայնություն լիցենզավորված մարմինների հետ ազգային օրենսդրությանը և լավագույն ազգային պրակտիկային համապատասխան վտանգավոր թափոնները տարածքից դուրս բերելու և վերամշակելու/հեռացնելու վերաբերյալ 		ի առկայության ստուգում		աղտոտման սահմանափակում
9. Հանքի սարքավորումների շահագործում և պահպանում	<ul style="list-style-type: none"> - Յուղերի հավաքման միջոցների առկայություն տարածքում թափված և արտահոսած յուղերը մաքրելու համար - Շահագործման ընթացքում յուղի 	Հանքի տարածք	Հանքի տարածքի գնում	Հանքի շահագործման ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Տարածք մտնող անձնակազմի և այլ մարդկանց առողջության համար վտանգների

Գործողություն	Ի±նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
	<p>արտահոսքի կանխում</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսած և պատահաբար թափված յուղերի ժամանակին մաքրում 				<p>կանխում</p> <ul style="list-style-type: none"> - Սարքավորումների շահագործման ու պահպանության հետևանքով նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից խուսափում - Հրդեհի դեպքում վնասի ժամանակին տեղայնացում ու նվազեցում

Գործողություն	Ինչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
10. Պատրաստվածու-թյուն արտակարգ իրավիճակներին	Հրդեհի ահազանգման և տեղայնացման համակարգերի առկայություն	Հանքի տարածք	Պարբերական ստուգումներ	հանքի շահագործման ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար - հանքի շահագործման ընդհատումից խուսափում

Գրականություն

1. «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տվյալներ, 2016թ.
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.,
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայք